Հավելված N 1
ՀՀ կառավարության 2018 թվականի
սեպտեմբերի 27-ի N 1025 - Լ որոշման

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2019թ. տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Տարեկան ծրագիր) մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5.1 հոդվածին համապատասխան:
2. Տարեկան ծրագիրը ընդգրկում է հաշմանդամություն ունեցող անձանց ներառումն ապահովելու նպատակով տվյալ բյուջետային տարում իրականացման ենթակա միջոցառումների, ծրագրերի, գործողությունների ամբողջությունը:
3. Ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել ՄԱԿ-ի 2006թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի /այսուհետ՝ Կոնվենցիա/ դրույթները, Կոնվենցիայի կատարման մասին հայաստանյան սկզբնական զեկույցի կատարման վերաբերյալ ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017թ. մայիսի 8-ի CRPD/C/ARM/CO/1 դիտարկումները, ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N 1 արձանագրային որոշումը, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների և Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված առաջարկությունները:

II. ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է՝

4. Ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը և խթանել նրանց մասնակցությունը տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական կյանքին:

Ծրագրի խնդիրներն են՝

5. հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացումն ապահովող օրենսդրական դաշտի բարելավումը,
6. հաշմանդամություն ունեցող անձանց համար կրթության բոլոր մակարդակներում և ամբողջ կյանքի ընթացքում ներառական կրթության և աշխատանքի ու զբաղվածության պետական երաշխիքների ապահովումը,
7. հաշմանդամություն ունեցող անձի իրավունքների իրացման համար անհրաժեշտ պայմանների և խելամիտ հարմարեցումների կարիքների գնահատումն՝ ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման /այսուհետ՝ ԱՀԿ ՖՄԴ/ սկզբունքների և մոտեցումների,
8. հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքային և գյուղական վայրերում ֆիզիկական միջավայրի, տրանսպորտի, տեղեկատվության և հաղորդակցության

տեխնոլոգիաների և համակարգերի, շենքերի ու ծառայությունների մատչելիության ապահովումը,

9. հաշմանդամություն ունեցող անձանց համար մարզական և մշակութային ծրագրերի մատչելիության ապահովումը,
10. հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների և պետական կառույցների միջև համագործակցության արդյունավետության բարձրացումը,
11. հաշմանդամության հիմնախնդիրների լուծմանն ու համընհանուր դիզայնի սկզբունքների ներդրմանն ուղղված քաղաքականության վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացումը,
12. հաշմանդամություն ունեցող անձանց համար առողջապահական և սոցիալական ծառայությունների մատչելիության ապահովումը,
13. հաշմանդամություն ունեցող անձանց համար իրենց ապրելու վայրը ընտրելու, աջակցության ծառայություններից հավասարապես օգտվելու և անձնական օգնական ունենալու հնարավորությունների ապահովումը:

III. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

14. Հետևողական քայլեր են իրականացվում ՀՀ օրենսդրությունը և պետական քաղաքականությունը Կոնվենցիայի սկզբունքներին և պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:
15. Մշակվում է հաշմանդամություն ունեցող անձանց ֆունկցիոնալության գնահատման համակարգը. աշխատանքներ են տարվում անձի կարողունակության բազմամասնագիտական գնահատման նոր համակարգի ներդրման և անձի կողմից իր իրավունքների իրացման համար անհրաժեշտ հնարավորությունների և պայմանների սահմանման ուղղությամբ՝ ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների և մոտեցումների:
16. Առողջապահության, զբաղվածության, կրթության և սոցիալական ոլորտներում իրականացվում են բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման հասցեական ծրագրեր՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի պայմանների ապահովմանը, ֆիզիկական, մտավոր, սոցիալական ու մասնագիտական կարողությունների զարգացմանն ու կյանքի բոլոր բնագավառներում նրանց ներառմանն ու մասնակցությանը: Մշտապես բարելավվում են հաշմանդամություն ունեցող անձի վերականգնողական անհատական ծրագրի մշակման և իրականացման ընթացքի գնահատման և հետադարձ կապի ապահովման մեխանիզմները:
17. Պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվում են պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներ:
18. Պարբերաբար նորացվում են տրամադրվող պարագաների տեխնիկական նկարագրերը, վերանայվում են նաև տրամադրման մեխանիզմները, 2018 թվականի ընթացքում փորձնական ծրագրով լսողական սարքերը և սայլակները շահառուներին տրամադրվել են հավաստագրի միջոցով:
19. Աշխատանքներ են իրականացվում հաշմանդամություն ունեցող անձանց պետական նպատակային ծրագրերի շրջանակներում տրամադրվող բոլոր աջակցող տեխնոլոգիաները տրամադրել հավաստագրերով:
20. Պարբերաբար թարմացվում և արդիականցվում են «Հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառման» և «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման» տեղեկատվական համակարգերը՝ ապահովելով հաշմանդամություն ունեցող

անձանց վիճակագրական տվյալների և պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման գործընթացի վերահսկելիությունը, ինչպես նաև բարձրացնելով տարբեր ձևաչափերով վերլուծություններ իրականացնելու հնարավորությունը:

21. 2018թ. հունիսի 30-ի դրությամբ հանրապետությունում հաշվառված է 188051 հաշմանդամություն ունեցող անձ, որից 106701 անձ /56,7%/ աշխատանքային տարիքի են:
22. 2018թ. հունվարի 1-ի դրությամբ Զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառված է 2983 հաշմանդամություն ունեցող անձ: Տարվա ընթացքում աշխատանքի է տեղավորվել 187 հաշմանդամություն ունեցող անձ, որից 48-ը զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի արդյունքում: Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում ընդգրկվել է 56 հաշմանդամություն ունեցող անձ:
23. Շարունակվում են աշխատանքները ներառական կրթության ընդլայնման ուղղությամբ. ներառական կրթություն իրականացնելու իրավունք վերապահված 201 հանրակրթական դպրոցներում 2017-2018 ուսումնական տարում սովորել է 6225 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա:
24. Երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն իրականացվում է հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից: Գնահատման հիմքում դրված են ԱՀԿ ՖՄԴ սկզբունքները:
25. 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և հաշմանդամ երեխա կարգավիճակ ունեցող անձանց համար ապահովվել է անվճար հիմունքներով կրթությունը միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում:
26. Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը և սոցիալական սպասարկումն իրականացվում է ինչպես շուրջօրյա խնամքի հաստատություններում, այնպես էլ տնային պայմաններում:
27. Կառավարության ուշադրության կենտրոնում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հիմնահարցերը: Իրականացվում են աշխատանքներ հոգեկան առողջության ոլորտում համայնքահեն ծառայությունների նոր մոդելների ներդրման, առկա ռեսուրսների ու ներուժի հզորացման, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրմանն առնչվող իրավական հիմքերի մշակման ուղղությամբ:
28. Կարևորելով հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ծառայություններ տրամադրող ցերեկային կենտրոնների գործունեությունը՝ պետական աջակցություն է ցուցաբերվում «Փրկություն», «Առավոտ» «Հույսի կամուրջ», «Լիարժեք կյանք», «Իմ ուղին» «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ բարեգործական և «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպություններին: Ցերեկային կենտրոններում համապատասխան ծառայությունների մատուցումը նպաստում է ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը, այլև նրանց ընտանիքների անդամների զբաղվածության հարցերի կարգավորմանը: Այս հանգամանքից ելնելով է, որ կառավարությունը տարեցտարի փորձում է ընդլայնել նման կենտրոնների գործունեությունը:
29. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նիստերի ընթացքում Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովների ներկայացուցիչների, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ քննարկվել են հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների վերաբերյալ բազմաթիվ հարցեր, ներկայացվել են համապատասխան առաջարկություններ դրանց կարգավորման ուղղությամբ:

30. Հասարակության իրազեկության բարձրացման նպատակով՝ հաշմանդամության հիմնախնդիրները պարբերաբար լուսաբանվել են հեռուստատեսությամբ՝ նախարարության մասնագետների և ոլորտում գործող շահագրգիռ հասարակական կազմակերպությունների կողմից:
31. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության գործընթացում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սերտ համագործակցում է հանրապետական գործադիր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ:

IV. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

32. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ուղղված 2019 թվականի համար նախատեսված միջոցառումներն իրականացվելու են 12 հիմնական ուղղություններով՝ համաձայն N 2 հավելվածի:
33. Շարունակվելու են աշխատանքները հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները կանոնակարգող օրենսդրությունը Կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու ուղղությամբ, մասնավորապես՝
1) «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի ընդունում և համապատասխան ենթաօրենսդրական ակտերի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների ներդնում,
2) Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021թթ. համալիր ծրագրից բխող միջոցառումների իրականացում,
3) Հաշմանդամություն ունեցող անձի իրավունքների իրացման համար անհրաժեշտ պայմանների և խելամիտ հարմարեցումների կարիքի գնահատման և ծառայությունների տրամադրման նոր համակարգի ներդրում:
34. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման և նրանց կյանքի որակի բարձրացման նպատակով, բոլոր ոլորտներում իրականացվելու են նրանց իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ:
35. 2019թ. տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումները նպատակաուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համար անհրաժեշտ հավասար հնարավորությունների և անկախ կյանքի պայմանների ապահովմանը, առողջապահության, զբաղվածության, կրթության և սոցիալական այլ ոլորտներում նրանց մասնակցությունը խոչընդոտող արգելքների վերցմանը:
36. Ապահովվելու է հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող կազմակերպությունների ներգրավվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց առնչվող օրենսդրությունը, քաղաքականությունները, ռազմավարություններն ու գործողությունների ծրագրերը մշակելիս:
37. Կմշակվեն մեխանիզմներ ամրապնդելու հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի դերը՝ ապահովելու միջոլորտային համագործակցությունը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

18_1025

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2018 թվականի
սեպտեմբերի 27-ի N 1025 - Լ որոշման

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2019 թվականի տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումների ցանկ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու կատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման չափը և աղբյուրը	Ակնկալվող արդյունքը
1.	**Օրենսդրության համապատասխանեցում ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի սկզբունքներին**				
1.1.	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի և օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկի մշակում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից
1.2.	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացումն ապահովելու նպատակով՝ գործող իրավական ակտերում փոփոխություններ կամ նոր իրավական ակտերի ընդունում:	Նախարարություններ Քաղաքաշինության պետական կոմիտե Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	Բոլոր ոլորտների իրավական ակտերի համապատասխանեցում ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Կովենցիայի սկզբունքներին, հաշմանդամություն

					ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց համար հավասար և մատչելի պայմաններ 1.3.ապահովելու վերաբերյալ դրույթների ամրագրում, խտրական դրույթներ պարունակող իրավական ակտերի վերանայում
1.3.	Հաշմանդամություն ունեցող անձի իրավունքների իրացման համար անհրաժեշտ պայմանների և խելամիտ հարմարեցումների կարիքների գնահատման նոր համակարգի ներդրում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ	Անձի կարիքների բազմակողմանի գնահատում և հաշմանդամության գնահատում՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման (ԱՀԿ ՖՄԴ) սկզբունքների հիման վրա
1.4.	ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016թ. նոյեմբերի 22-ի N 136-Ն որոշման վերանայում՝ քվեարկության գործընթացի մատչելիության ապահովման նպատակով:	Կենտրոնական ընտրական հանձնաժողով /համաձայնությամբ/	2019թ. փետրվարի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	Քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար լրացուցիչ հնարավորություններով

					համալրում և հավասար պայմանների ապահովում
1.5.	Խնամատարության և խնամատարության հանձնված հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքի աջակցության իրավական հիմքերի ստեղծում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	Հաշմանդամություն ունեցող երեխայի դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու աջակցության մեխանիզմների ամրագրում
1.6.	«Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության իրականացման 2018-2022 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունում՝ ապահովելով հաշմանդամություն ունեցող կանանց կարիքների գնահատումը, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանն ուղղված տեղական սոցիալական ծրագրերի մշակումը և իրականացումը	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	Կանանց իրավունքների պաշտպանություն, սոցիալական, առողջապահական, կրթական և այլ ծառայությունների հասանելիության ապահովում
2.	**Հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական միջավայրի, տրանսպորտային միջոցների, տեղեկատվության և հաղորդակցման միջոցների և տեխնոլոգիաների հասանելիության և մատչելիության իրավունքի ապահովում**				
2.1.	Կառուցվող և վերակառուցվող շենքերի և շինությունների նախագծային առաջարկների մշակման և շահագործման հանձնելու փուլում հաշմանդամություն ունեցող անձանց	Պետական կառավարման մարմիններ Երևանի	Տարվա ընթացքում	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում	ճարտարապետահատակագծային առաջադրանքներում հաշմանդամություն

	հարցերով զբաղվող ՀԿ-ների ներգրավում	քաղաքապետարան (համաձայնությամբ) Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)			ունեցող անձանց համար, մատչելիության նորմերի համապատասխանության որոշարկման գործընթացին հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀԿ-ների մասնակցության ապահովում
2.2.	Քաղաքային և գյուղական վայրերում հասարակական շենքերի և շինությունների (այդ թվում կրթական և առողջապահական հաստատությունների), բնակելի տարածքների մատչելիության գնահատում և խելամիտ հարմարեցումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	Նախարարություններ Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված միջոցներ	Հասարակական և արտադրական նշանակության շենքերի ու շինությունների մատչելիության վերաբերյալ տեղեկատվության առկայություն
2.3.	Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրով 46 դպրոցների վերակառուցման շրջանակներում ապահովել մատչելիության նորմերը հաշմանդամություն ունեցող անձանց համար	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե Ասիական զարգացման բանկ	Նշված ծրագրով վերակառուցված դպրոցներում ապահովվել է հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայր (անխոչընդոտ միջավայր) շենքի ներսում և դրսում

2.4.	ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում հաշմանդամություն ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալների համար մատչելի պայմանների ապահովում	Արդարադատության նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	Քրեակատարողական հիմնարկի տարածքում հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժի մատչելիության ապահովում
2.5.	Քրեակատարողական հիմնարկներում հաշմանդամություն ունեցող անձանց համար խելամիտ հարմարեցումների ապահովում:	Արդարադատության նախարարության	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	Քրեակատարողական հիմնարկի տարածքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման և տեղաշարժի մատչելիության ապահովում
2.6.	Երևանի փողոցների խաչմերուկներում և բանուկ մասերում թեքահարթակների կառուցում, ինչպես նաև տեսողության խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժման համար մատչելի պայմանների ապահովում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Երևան համայնքի բյուջե	Տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար հավասար և մատչելի պայմանների ապահովում
2.7.	Ներքաղաքային և միջքաղաքային երթուղիներում շահագործվող ավտոբուսների վրա հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ վերելակային հարմարանք-ների և ավտոբուսների ուղեսրահներում կանգառների անվանումների բարձրաձայն հայտարարման սարքերի, ինչպես նաև խոսքի խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված կանգառի ազդանշանի սեղմակի տեղադրում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Համայնքային բյուջեներ	Հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքային հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության ապահովում:

2.8.	Հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված տրանսպորտային միջոցների ձեռքբերում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Համայնքային բյուջեներ, օրենքով չարգելված այլ միջոցներ	Տվյալ տարում ձեռքբերվող տրանսպորտային միջոցները մատչելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար
2.9.	Լուսացույցների վրա ձայնային ազդանշանների տեղադրում	Ոստիկանություն Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղարշարժի ապահովում
2.10.	Իրավիճակային օգնության տրամադրման ուղեցույցի տեղայնացում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ օրենքով չարգելված ֆինանսական այլ միջոցներ	Հանրային ծառայություններում հաշմանդամություն ունեցող անձանց իրավիճակային օգնություն տրամադրող վերապատրաստված մասնագետներով ապահովում
3.	**Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ապահովում**				
3.1.	«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակում և ներկայացում Ազգային ժողով	Կրթության և գիտության նախարարություն	2019թ սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	Հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախադպրոցական

3.2.	Երևան քաղաքի յուրաքանչյուր վարչական շրջանում ներառական կրթություն իրականացնող մանկապարտեզներով ապահովում, գործող մանկապարտեզների հնարավորությունների ընդլայնում՝ երեխաների կարիքներին համապատասխան:	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Երևան համայնքի բյուջե ՀՀ օրենքով չարգելված ֆինանսական այլ միջոցներ	կրթության մատչելիության ապահովում
3.3.	Երևանում, Շիրակի և Արագածոտնի մարզերում համընդհանուր ներառական կրթության ապահովում	Կրթության և գիտության նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության ապահովում Երևան քաղաքի՝ 170, Շիրակի մարզի՝ 149 և Արագածոտնի մարզի՝ 118 հանրակրթական դպրոցներում: Երևան քաղաքում՝ 5, Շիրակի մարզում՝ 2 և Արագածոտնի մարզում՝ 1 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնում:
3.4	Համընդհանուր ներառմանն ուղղված աշխատանքներ՝ հանրակրթական դպրոցներում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Համայնքային բյուջե ՀՀ օրենքով	Դպրոցներում հարմարեցված միջավայրի արդիականացում, գույքի

		Մարզպետարաններ (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)		չարգելված ֆինանսական այլ միջոցներ	թարմացում
3.5.	Հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատող մանկավարժական աշխատողների վերապատրաստում	Կրթության և գիտության նախարարության «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական և համայնքային բյուջեներ ՀՀ օրենքով չարգելված ֆինանսական այլ միջոցներ	Երևանի 170 հանրակրթական դպրոցների և առնվազն 5 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մանկավարժական աշխատողների, Շիրակի՝ 149 հանրակրթական դպրոցների և 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մանկավարժական աշխատողների և Արագածոտնի՝ 118 հանրակրթական դպրոցների և 1 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության

					կենտրոնների մանակավարժական աշխատողների վերապատրաստում
3.6.	Հանրակրթական դպրոցներում ուսումնամեթոդական նյութերի և ձեռնարկների մշակում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար մատչելի ձևաչափով	Կրթության և գիտության նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /14.880.000/ ՀՀ օրենքով չարգելված ֆինանսական այլ միջոցներ	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ապահովվածություն հինգ անուն ուսումնամեթոդական նյութերով և ձեռնարկներով
3.7	Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսանողի կրթական կարիքի ուսումնասիրում	Կրթության և գիտության նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) Մարզպետարաններ (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ օրենքով չարգելված ֆինանսական այլ միջոցներ	Հաշմանդամություն ունեցող ուսանողների համար մատչելի ուսումնական գործընթացի կազմակերպման խնդիրների վերհանում, հաշվետվությունների ներկայացում
3.8.	«Ժեստերի լեզվի թարգմանիչների պատրաստման և վերապատրաստման» ծրագրերի ներդրում ՀՊՄՀ-ում	Կրթության և գիտության նախարարություն Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական	Տարվա ընթացքում	ՀՀ օրենքով չարգելված ֆինանսական այլ միջոցներ	Ծրագիրը մշակվել և հավանության է արժանացել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

		համալսարան			
4.	**Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի և զբաղվածության իրավունքի ապահովում:**				
4.1.	Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում	Աշխատանքի և սոցիալական հացերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (6 387.5 հազ. դրամ)	70 հաշմանդամություն ունեցող անձի ներգրավում ծրագրում
4.2.	Գործազուրկների, աշխատանաքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրում	Աշխատանքի և սոցիալական հացերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (5 775.0 հազ. դրամ)	70 հաշմանդամություն ունեցող անձի ներգրավում ծրագրում
4.3.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցում և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում	Աշխատանքի և սոցիալական հացերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (27 060.0 հազ. դրամ)	80 հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանում
4.4.	Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների մատուցում զբաղվածության աջակցման կենտրոնում	Աշխատանքի և սոցիալա-կան հացերի նախարա-ություն Հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե, (9 777.9 հազ. դրամ)	60 հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանում
4.5.	«Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխությունների և լրամշակումների իրականացում:	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2019թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	Քվոտայի համակարգի առավել նպատակային և արդյունավետ ներդրման ու գործարկման համար

					անհրաժեշտ՝ օրենքով սահմանված հիմքերի և մեխանիզմների լիարժեք ապահովում
5.	**Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման ծրագրեր**				
5.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների համար աջակցության ծրագրերի իրականացում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Երևան համանքի բյուջե	Հաշմանդամութուն ունեցող անձանց սոցիալական աջակցության տարբեր ծրագրերի միջոցով կարիքի բավարարում, սոցիալական վիճակի բարելավում
5.2.	Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ /հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են տուն ինտերնատներում խնամվողների շուրջ 70 %/	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (1 504 144.0 հազ. դրամ)	850 հաշմանդամություն ունեցող անձի շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման կազմակերպում
5.3.	Միայնակ տարեցների և հաշմանդամների տնային պայմաններում սոցիալական սպասարկում /հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են սպասարկվողների շուրջ 30%-ը/	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (45 628.9 հազ. դրամ)	Շուրջ 470 հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական սպասարկման կազմակերպում տնային պայմաններում
5.4.	Խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրում հոգեկան առողջության	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում.	ՀՀ պետական բյուջե (13 650.1 հազ.	20 հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական

	խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնում			դրամ)	սպասարկում ցերեկային կենտրոնում
5.5.	Տնային պայմաններում և ցերեկային կենտրոններում ծեր և հաշմանդամություն ունեցող քաղաքացիների սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրում /հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են սպասարկվողների շուրջ 37 %-ը/	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (74 519.7 հազ. դրամ)	1204 հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական սպասարկում ցերեկային կենտրոններում և տնային պայմաններում
5.6.	Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող դեռահասների և երիտասարդների ցերեկային խնամքի սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (28 117.5 հազ. դրամ)	Մտավոր խնդիրներ ունեցող ամսական միջինը 50 հաշմանդամություն ունեցող անձի ցերեկային խնամքի սոցիալ-վերականգնողական ծառայությունների տրամադրում
5.7.	Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ հոգեբանական աջակցության տրամադրում ցերեկային կենտրոնում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (11 555.7 հազ. դրամ)	60 շահառուի սոցիալ հոգեբանական աջակցության տրամադրում:
5.8.	18 տարեկանից բարձր տարիքի աուտիզմ ունեցող անձանց զբաղվածության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրում ցերեկային կենտրոնում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Հասարակական	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (26 666.9 հազ. դրամ)	Շուրջ 80 աուտիզմ ունեցող անձանց հնարավոր զբաղվածության և սոցիալական ներառման

		կազմակերպություն (համաձայնությամբ)			ապահովում
5.9.	Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (74,667.3 հազ. դրամ)	Ցերեկային կենտրոններում հաշմանդամություն, սոցիալ-հոգեբանական և այլ խնդիրներ ունեցող երեխաներն ծառայությունների մատուցում:
5.10.	ՊՆ համակարգի զինվորական հաշմանդամության կենսաթոշակ ստացող և գործող օրենսդրության շրջանակներում բնակմակերեսի կարիքավոր հանդիսացող նախկին զինծառայողների բնակարանային ապահովում	Պաշտպանության նախարարություն Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց բնակ-կենցաղային պայմանների բարելավում
6	**Հաշմանդամություն ունեցող անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովում**				
6.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնությանն ու վերականգնմանն ուղղված ծրագրերի իրականացում, անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրում	Առողջապահության նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում, այդ թվում նաև վերականգնողական ծառայությունների մատուցում, ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում, հատուկ և դժվարամատչելի

					ախտորոշիչ հետազոտությունների իրականացում
6.2.	Առողջապահության ոլորտի ծառայությունների՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման հայեցակարգի մշակում	Առողջապահության նախարարություն	Տարվա ընթացքում.	ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հաշմանդամություն ունեցող անձանց համար առողջապահական ծառայությունների մատչելիության (ծրագրային և ֆիզիկական) նպատակով գործողությունների մշակում
6.3.	Արտակարգ իրավիճակներում ծառայությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի կանխարգելման, բուժման, խնամքի և աջակցության ծրագրերի հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելիության և մատչելիության ապահովում:	Առողջապահության նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	Առողջապահական ծառայությունների, ներառյալ արտակարգ իրավիճակներում ծառայությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-Ի կանխարգելման, բուժման, խնամքի և աջակցության մատչելիության ապահովում
6.4.	Բժիշկների համար հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին դասընթացների մոդուլների մշակում, վերապատրաստումների իրականացում	Առողջապահության նախարարություն Կրթության և գիտության նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Բժիշկների մոտ հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու հմտությունների և բարեվարքության ձևավորում

6.5.	Հաշմանդամության ունեցող նախկին զինծառայողներին մասնագիտացված վերականգնողական բուժօգնության ծառայությունների մատուցում, բուժման և հանգստի կազմակերպում	Պաշտպանության նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց բուժում, հանգստի կազմակերպում ՊՆ «Լեռնային Հայաստան» հանգստյան տուն-առողջարանում
7.	**Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական ծառայություններից օգտվելու իրավունքի ապահովում**				
7.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում աջակցող տեխնոլոգիաների կարիքի գնահատում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ օրենքով չարգելված ֆինանսական այլ միջոցներ	Հաշմանդամություն ունեցող անձանց կարիքին համարժեք ծառայությունների պլանավորում
7.2.	Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող տեխնոլոգիաներով ապահովում և դրանց վերանորոգում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (831,242.6 հազ. դրամ)	Հաշմանդամություն ունեցող անձանց շուրջ 10 688 աջակցող միջոցների տրամադրում
7.3.	Տեսողության խնդիր ունեցող անձանց համար մատչելիությանն ուղղված ծրագրերի իրականացում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (9 786.6 հազ. դրամ)	Տեսողության խնդիր ունեցող անձանց համար մատչելի ձևաչափով ծառայությունների մատուցում
7.4.	Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնման աշխատանքների կազմակերպում և իրականացում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (181 562.2 հազ. դրամ)	Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական ծառայութունների տրամադրում
7.5	Հաշմանդամություն ունեցող երեխաների համար վերականգնողական ծրագրերի իրականացում՝ հիդրոթերապիայի,	Երևանի քաղաքապետարան	Տարվա ընթացքում	Երևան համայնքի բյուջե	Հաշմանդամություն ունեցող երեխաների առողջության

	հիպոթերապիայի, արտթերապիայի միջոցով	«Հայ մայրեր» բարեգործական հիմնադրամ (համաձայնությամբ)			վերականգնում:
7.6.	Հաշմանդամություն ունեցող անձանց համար անձնական աջակցողի ծառայության ներդրման մեխանիզմների մշակում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում.	ՀՀ օրենքով չարգելված ֆինանսական միջոցներ	Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքը կազմակերպելու հնարավորության ընձեռում
7.7	Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների շահագործում՝ ներառելով ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող երեխաների վերականգնողական ծառայությունների մատուցում, կանխարգելում առողջական խնդիրներ ունեցող երեխաների մուտքը շուրջօրյա հաստատություններ
8.	**Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի մարզական և մշակութային ծրագրեր**				
8.1.	«Ընտանեկան գրադարանավար» ծրագրի իրականացում ՀՀ մարզերում	Մշակույթի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (774.0 հազ. դրամ)	Տեղաշարժման դժվարություն և հաշմանդամություն ունեցող անձանց համար գրադարանային սպասարկում տնային պայմաններում
8.2.	Թանգարաններում, գրադա-րաններում մշակութային ծրագրերի իրականացում	Մշակույթի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց

		Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)		սուբսիդիայի շրջանակում	մշակութային կյանքին մասնակցության ապահովում
8.3.	Տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մակետների ստեղծում:	Մշակույթի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	Տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար մշակութային ժառանգությանը հաղորդակցվելու հասանելիության սպահովում
8.4.	Թատրոններում լսողության խնդիրներ ունեցող անձանց համար ժեստերի լեզով թարգմանության ներդրում	Մշակույթի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե սուբսիդիայի շրջանակում՝ ըստ շահառուների կողմից ներկայացված հայտի	Հաշմանդամություն ունեցող անձանց մշակութային կյանքին մասնակցության ապահովում
8.5.	Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի Երևանի, Լոռու, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի մասնաճյուղերում գեղագիտական, արհեստագործության ուսուցման ծրագրերի իրականացում	Մշակույթի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /102,286.5 հազ. Դրամ/	Հաշմանդամություն ունեցող երեխաների համար արվեստի և արհեստների (12 մասնագիտություն) անվճար ուսուցում
8.6.	Հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ստեղծագործական	Մշակույթի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե «Մշակութային	Հաշմանդամություն ունեցող անձանց ստեղծագործական

	ծրագրերի նպատակային աջակցություն	Մարզպետարաններ		միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակում	ներուժի բացահայտում և խթանում
8.7.	Մշակութային միջոցառումներին մասնակցելու նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց աբոնեմենտի տրամադրում	Մշակույթի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակում	Մշակութային միջոցառումներին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանում
8.8	«Էրեբունի-Երևան» տոնակատարության շրջանակներում միջոցառումների իրականացում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Համայնքի բյուջե	հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության ապահովում
8.9.	Պետական աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին՝ հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ մատուցելու նպատակով	Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե (9 000.0 հազ. դրամ)	Հաշմանդամային սպորտով զբաղվող մասնագիտացված կազմակերպություններ՝ մարզական միջոցառումներ անցկացնելու և միջազգային մրցաշարերին մասնակցելու նպատակով
8.10	«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի շրջանակում անցկացվող մրցույթ ընտանիքի կազմում սայլակով տեղաշարժվող հաշմանդամություն ունեցող անձ ունեցող ընտանիքների համար	Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	2019թ. Հուլիս - սեպտեմբեր	ՀՀ պետական բյուջե (7 300.0 հազ. դրամ)	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց

8.11.	«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում	Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	2019թ. Օգոստոս	ՀՀ պետական բյուջե (16 945.3 հազ. դրամ)	սոցիալական ներառում հասարակություն
8.12.	Խուլերի ըմբշամարտի Եվրոպայի առաջնությանը Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում	Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)	2019թ. Հոկտեմբեր	ՀՀ պետական բյուջե (10 011.1 հազ. դրամ)	Խուլերի ըմբշամարտի Եվրոպայի առաջնությանը ՀՀ մարզական պատվիրակության մասնակցության ապահովում
8.13.	Տոկիոյի պարալիմպիկ խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում	Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)	2019թ.	ՀՀ պետական բյուջե (6 400.1 հազ. դրամ)	Տոկիոյի պարալիմպիկ խաղերին ՀՀ մարզական պատվիրակության մասնակցության ապահովում
9.	**Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանություն**				

9.1	Վտանգավոր և արտակարգ հումանիտար իրավիճակներին առնչվող իրավական ակտերում ըստ անհրաժեշտության նախատեսել փոփոխություններ հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանվածության ապահովման նպատակով	Արտակարգ իրավիճակների նախարարության	Տարվա ընթացքում	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	Արտակարգ իրավիճակներիում հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանվածության ապահովման բարձրացում
9.2.	Հաշմանդամություն ունեցող անձանց ուսուցում՝ սեյսմապաշտպանության վարքականոնների վերաբերյալ	Արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն»ՊՈԱԿ	2019թ. 2-րդ եռամսյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	
9.3	Արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգի մեջ հատուկ ազդանշանների ներդնում լսողության և տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար	Արտակարգ իրավիճակների նախարարության	Տարվա ընթացքում	Օրենքով չարգելված այլ միջոցներ	Հաշմանդամություն ունեցող անձանց անվտանգության ապահովում իրենց համար մատչելի ձևաչափով
10.	**Սոցիալական գործընկերություն հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների միջև**				
10.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի աշխատանքերի իրականացում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Մարզպետարաններ	Տարվա ընթացքում	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների քննարկում պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների

					մասնակցությամբ
11.	**Վիճակագրություն և տվյալների հավաքագրում**				
11.1.	Տարբեր ոլորտներում վարվող տեղեկատվական համակարգերում հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվության ներառում	Վիճակագրական կոմիտե Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն Կրթության և գիտության նախարարություն Առողջապահության նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում	Բոլոր ոլորտներում հավաքագրվող տեղեկատվություններում հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվության տարանջատում ըստ հաշմանդամության տեսակի, սեռի, տարիքի, բնակության վայրի
12.	**Իրազեկվածության բարձրացում**				
12.1.	Հանրային ծառայողների համար հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին դասընթացների մոդուլների մշակում և ներդնում	Քաղաքացիական ծառայության գրասենյակ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող շուրջ 200 մասնագետների՝ այդ թվում՝ իրավապահների դատավորների, իրավաբանների

					քաղծառայողների իրազեկում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին, հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության և կարծրատիպերի վերացում:
12.2	Սոցիալական ծառայության տարածքային մարմինների սոցիալական աշխատողների վերապատրաստումներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, նրանց մատուցվող ծառայությունների վերաբերյալ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նարարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, նրանց մատուցվող ծառայությունների վերաբերյալ իրազեկման բարձրացում, համապատասխան ծառայությունների մատուցում
12.3	Գործատուների շրջանում հաշմանդամություն ունեցող կանանց հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հաշմանդամություն ունեցող կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանություն, գործատուների շրջանում նրանց նկատմամբ կարծրատիպերի

					վերացում
12.4.	Հաշմանդամություն ունեցող անձանց այդ թվում՝ կանանց, երեխաների, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ ուղեցույցների մշակում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Տարվա ընթացքում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Հաշմանդամություն ունեցող կանանց, երեխաների, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց վերաբերյալ իրազեկվածության բարձրացում
12.5.	Լավագույն քարոզարշավի, հանրային իրազեկության, լրատվության մրցանակաբաշխություն	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն.	2019թ. 2-րդ կիսամյակ	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՁԼՄ-ների շրջանում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և նրանց հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացման նախաձեռնությունների խթանում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ